Գուդեմնիս

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 82 կմ,

Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 16 կմ,

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400 մ,

Կարգավիճակը՝ սահմանամերձ,

Նախկին անվանումներն են Գիդեմնաս, Գիտեմնաս, Գտանիս, Կադեմնիս, Ուճանապար, Ուջանաբաս, Ուջանապար: Գյուղը երբեմն նույնացնում են Գեղանանի և Գուտենիի հետ, որը անընդունելի է, առաջինը այժմյան Քաջարանն է, իսկ Գուտենի գյուղը գտնվում է Վայոց ձորի գավառում: Գյուղից 4 կմ արևելք կան հին բնակավայրերի ավերակներ: Գյուղում կան անշուք, ուշ ժամանակում կառուցված եկեղեցի: Գյուղի մոտ են գտնվում միջնադարյան հայտնի Կաքավաբերդ բերդի ավերակները:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝ - անասնապահությունը, - դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1407 հա, այդ թվում՝ - Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 578 հա, որից՝ - վարելահող՝ 43 հա, բազմամյա տնկարկ՝ 9 հա, արոտ՝ 37 հա, այլ հողատեսք՝489 հա - բնակավայրերի հողեր՝ 17 հա, - արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա - էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 5 հա - հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 804 հա, - ջրային հողեր՝ 2 հա